ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի ապրիլի 28-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 գնման պայմանագրում 2021 թվականի հոկտեմբերի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 13.05.2021թ. N 790-Ն որոշում
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի օրացուցային գրաֆիկի փոփոխություն և վճարման ժամանակացույցի լրացում
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

28.04.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 գնման պայմանագրի

ք. Երևան 28.10.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Կանժիլստրոյ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Գեղամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.05.2021թ. N 790-Ն որոշումը ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 28.04.2021թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.1.2 Պայմանագիրը լրացնել նոր N 3 հավելվածով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած է 2 (երկու) էջից, հավելված N 2-ը՝ 1 (մեկ) էջից, որոնք համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Կանժիլստրոյ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Էջմիածին, Վռամ Կոստանյան 5
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500419714700
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 03308709
Հ/Հ 900011035723	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Գեղամյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
28.04.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի
28.10 .2021 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
28.04.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը	Աշխատանքների կատարման ժամկետը
1	Ընդհանուր նախապատրաստական և հողային աշխատանքներ	ոչ ուշ քան 80-րդ օրացուցային օրը ներառյալ
2	Միաձույլ ե/բ աշխատանքներ (0.00 նիշից ցածր և բարձր)	ոչ ուշ քան 180-րդ օրացուցային օրը ներառյալ
3	Պատերի, միջնորմների շարվածք, երեսպատման աշխատանքներ	ոչ ուշ քան 350-րդ օրացուցային օրը ներառյալ
4	Տանիքային աշխատանքներ	ոչ ուշ քան 290-րդ օրացուցային օրը ներառյալ
5	Բացվածքների լրացում	ոչ ուշ քան 260-րդ օրացուցային օրը ներառյալ
6	Հատակներ, առաստաղներ, հարդարում	ոչ ուշ քան 420-րդ օրացուցային օրը ներառյալ
7	Ներքին և արտաքին ինժեներական կոմունիկացիաներ	ոչ ուշ քան 410-րդ օրացուցային օրը ներառյալ
8	Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ	ոչ ուշ քան 420-րդ օրացուցային օրը ներառյալ
9	Անցումի և օժանդակ օբյեկտների կառուցում	ոչ ուշ քան 330-րդ օրացուցային օրը ներառյալ
	Շինարարության կազմակերպման մոդուլային տիպի դպրոցի կառուցման աշխատանքների ամբողջ ծավալի կատարման ժամկետը կազմում է	**420 օրացուցային օր**

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2021 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների

N	Գումարը	Կատարվելիք աշխատանքների վերջնաժամկետը
1	94 881 022	Ոչ ուշ քան 150-րդ օրացուցային օրը
Ընդամենը՝ 94 881 022		**150 օրացուցային օր**

* **Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխություններն անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:>>:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035723
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մարտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Կանժիլստրոյ>> ՍՊԸ
ք. Էջմիածին, Վռամ Կոստանյան 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500419714700
ՀՎՀՀ 03308709

Տնօրեն՝

_____ Ա. Գեղամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
28.04.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի
28.10 .2021 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 3
28.04.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211231/502	ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	94 881 022	94 881 022	94 881 022

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035723
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մնրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Կանժիլստրոյ>> ՍՊԸ
ք. Էջմիածին, Վռամ Կոստանյան 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500419714700
ՀՎՀՀ 03308709

Տնօրեն՝

_____ Ա. Գեղամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

N 6704-02
«26» 10 2021

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԿԱՆԺԻԼՍՏՐՈՅ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 28,464,310 (քսանութ միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N __ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար նախատեսված օրերի քանակից առվազն իննսուն աշխատանքային օր ավել ժամկետով, բայց ոչ ուշ քան 10.05.2023թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ **Ա. Սարգսյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Ն. Սարգսյան**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

N 6705-02
«26» 10 2021

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԿԱՆԺԻԼՍՏՐՈՅ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 9,488,110 (ինը միլիոն չորս հարյուր ութսունութ հազար մեկ հարյուր տասը) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար նախատեսված օրերի քանակից և երաշխիքային ժամկետից (առնվազն 365 օրացուցային օր) առվազն իննսուն աշխատանքային օր ավել ժամկետով, բայց ոչ ուշ քան 10.05.2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասեցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան